



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2010 Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՄՈՏ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի նիստի թիվ 27 արձանագրության հանձնարարականներ բաժնի 1/2/3/ կետերի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը պատշաճ կազմակերպելու նպատակով *կարգադրում են՝*

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության օր սահմանել յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը ժամը 12.00-ին:

ա. Յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա առաջին շաբաթվա հինգշաբթի օրը ժամը 11.00-ին մարզպետի մոտ կազմակերպել ընդունելություն, ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի քաղաքացիների համար, Թալինի քաղաքապետի աշխատասենյակում:

բ. Յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա երկրորդ շաբաթվա հինգշաբթի օրը ժամը 11.00-ին մարզպետի մոտ կազմակերպել ընդունելություն, ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի քաղաքացիների համար, Ապարանի քաղաքապետի աշխատասենյակում:

գ. Յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա երրորդ շաբաթվա հինգշաբթի օրը ժամը 11.00-ին մարզպետի մոտ կազմակերպել ընդունելություն, ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի տարածաշրջանի քաղաքացիների համար, Ծաղկահովիտի գյուղապետի աշխատասենյակում:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի մոտ ընդունելություն ցանկացող քաղաքացիները շաբաթվա ընթացքում նախապես հերթագրվում են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարությունում:

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելություններին պարտադիր մասնակցում են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, մարզպետի խորհրդականները, օգնականները, քարտուղարության, առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության, տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի, ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշպանության բաժնի, իրավաբանական բաժնի պետերը:

Ելնելով անհրաժեշտությունից, մարզպետի հանձնարարությամբ քաղաքացիների ընդունելություններին կարող են մասնակցել այլ պաշտոնատար անձինք:

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության օրերի եւ ժամերի մասին տեղեկատվությունը տեղադրել քաղաքացիների համար տեսանելի վայրում:

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ սույն կարգադրության մասին ՁԼՍ-ների միջոցով իրազեկել հանրությանը եւ այն տեղադրել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ինտերնետային կայքում:

6. Սույն կարգադրության պահանջների կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին: Կատարման պարտականությունը դնել քարտուղարության եւ ՏԻ եւ ՀԳՄՂ վարչության պետերի վրա

7. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ